ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ հանրային գնումների ոլորտում առկա իրավակարգավորումների բարեփոխմանն ուղղված

Սույն առաջարկությունների փաթեթը կազմվել է Հայաստանի ՔՀԿ-ների կառուցողական երկխոսության ցանցի շրջանակներում«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Հայկական բիզնես կոալիցիայի կողմից

ԵՐԵՎԱՆ
փետրվար 2020

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019թ. ապրիլի 16-ին Երևանում Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի մասը կազմող «Հայկական Բիզնես Կոալիցիայի կարողությունների զարգացման ենթածրագրի» շրջանակում տեղի ունեցավ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (այսուհետ՝ ԻՀԱ) կողմից կազմակերպված «Բիզնեսի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը գնումների ոլորտի օրենսդրության բարեփոխումների իրականացմանը» թեմայով քննարկումը: Քննարկմանը ներկա էր նաև ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կարեն Բրուտյանը: Նա նշեց, որ օրենսդրական բարեփոխումների նպատակով անցկացվում են հանդիպումներ հասարակական և բիզնես հատվածի ներկայացուցիչների հետ, որոնց արդյունքում ակնկալվում է ախտորոշել և բարձրաձայնել առկա խնդիրների և հնարավոր կիրառելի լուծումների մասին:

Աշխատանքային քննարկումից հետո ԻՀԱ-ն ամփոփել և պաշտոնական գրությամբ թվով 35 առաջարկություններ է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարին հանրային գնումների քաղաքականությունների բարելավման նպատակով: Պետք է նշել, որ վերոնշյալ առաջարկություններից 24-ի մասով Ֆինանսների նախարարությունից (այսուհետ՝ ՖՆ) ի պատասխան ստացվել է ամփոփաթերթ, որտեղ թվով 10 առաջարկություններն ընդունելի են եղել, իսկ մնացածի մասով տրվել է պարզաբանում կամ արձանագրվել է հարցը քննարկման դարձնելու պատրաստակամություն: Ինչպես նաև, գրանցված հաջողություն է այն, որ ՖՆ-ն իր հերթին ներկայացրել է առաջարկությունները պետական կառավարման մարմիններ, որի արդյունքում ընդունելի համարված առաջարկները ներառվել են Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի փաթեթում: Ընդ որում, նշված նախագիծը հաստատվել է Կառավարության 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշմամբ, ուժի մեջ է մտել 02.11.2019թ.:

Հիմք ընդունելով այն հանգմանքը, որ ՖՆ-ն այժմ գտնվում է գնումների ոլորտումլրջագույն բարեփոխումների իրականացման դեռևս որոշումների կայացման և առաջիկա աշխատանքների պլանավորման փուլում՝ առաջարկում ենք հենց այս փուլում առաջնորդվել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների բարձրաձայնած խնդիրների արդյունքում հավաքագրված և լրամշակված առաջարկություններով:Ուստի, Ձեզ ենք ներկայացնում առաջարկությունների նոր փաթեթն ըստ հետևյալի

N	Խնդրի նկարագրությունը	Խնդրի լուծմանն ուղղված հիմնավորում և առաջարկություն
1	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»:* Նույն օրենքի 2-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ *«Գնման առարկայի բնութագրերը ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»:* Գործնականում համանման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համար չկա լիարժեք, ամբողջական, միանման, մեկ միասնական նկարագրություն: Սա հաճախ արտահայտվում է ձեռքբերված Ա/ԱՇ/Ծ որակի և գնի ոչ համարժեք հարաբերակցությամբ: Բացի այդ, պրատկիկայում գնման առարկայի բնութագրերը ձևավորվում են կոնկրետ ընկերությունների համար՝ վերջիններիս հաղթանակն ապահովելու նպատակով, որի արդյունքում պայմանագրերը մշտապես կնքվում են նույն ընկերության հետ: Այս կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն արդեն իսկ ներկայացրել են Բիզպաշտպան հարթակի միջոցով ստացված ազդարարումները:	Իրավասու մարմնի կողմից որոշակի խումբ ապրանքների՝ **գնման առարկայի բնութագրերի համար որոշակի նվազագույն չափանիշների (ուղեցույց) նախատեսում,** որը կբացառի երկակի մեկնաբանությունները տվյալ առարկայի բնութագրի մասով: *ՀՀ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխան գրությամբ նշվել է, որ այս առաջարկն ընդունելի է և հնարավոր է կարգավորել ՀՀ կառավարության որոշմամբ, սակայն վերջին օրենսդրական փոփոխություններում նշյալն արտացոլված չէր:*
2	ՀՀ կառավարությանN 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ *«Հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն*	Իրավասու մարմնի կողմից պաշտոնական պարզաբանման տրամադրում կամ համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում նոր հաշվարկի ձևով գնային առաջարկների սակարկման վերաբերյալ, պատասխանելով այն հարցին, **արդյոք մասնակիցը կարող է սակարկել միայն իր կողմից ներկայացված շահույթի մասը, թե թույլատրելի է համարվում նաև ինքնարժեքի սակարկումը:**

	*իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման»:*Ինչպես նաև, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետի՝*«Մասնակցի կողմից առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից»:* *Այսպիսով, մի շարք խնդիրներ են առաջանում գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի կիրառմամբ անցկացնելու դեպքում:* Համաձայն վերոնշյալ կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի կիրառման դեպքում մասնակիցներն հրավիրվում են գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցությունների: Սակայն լիազոր մարմնի կողմից չի տրամադրվել որևէ հստակ և լիարժեք պարզաբանում նոր հաշվարկի ձևով գնային առաջարկների սակարկման շուրջ, մասնավորապես՝ պարզ չէ արդյոք մասնակիցը կարող է սակարկել միայն իր կողմից ներկայացված շահույթի մասը, թե թույլատրելի է համարվում նաև ինքնարժեքի սակարկումը, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետին:	
3	Նախկինում կիրառվող որակավորման չափանիշների (աշխատանքային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, մասնագիտական փորձառություն) փոխարեն ներդրվել է որակի ապահովման ինստիտուտ, համաձայն որի *մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում է ներկայացնում:Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝* *- չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման, որի դեպքում ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով.*	**Որակի ապահովման ինստիտուտի ներդրման ուղղված իրավանորմերի վերանայում՝** հաշվի առնելով ՓՄՁ-ների համար ստեղծված ոչ բարենպաստ և խտրական պայմանները, օրինակ՝ **սահմանաչափի նվազեցում՝ 30-50%-ի չափով:**

	- գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման տեխնիկական հսկողության ծառայությունը, ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում պետք է նշել, որ ապահովման գործողության ժամկետը չպետք է պակաս լինի կնքվելիք պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման վերջնաժամկետից, ներառյալ՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման համար սահմանված ժամկետը, և ներկայացվում է օրենքի 35-րդ կետով սահմանված կարգով: Պայմանագրի գնի 100%-ի չափով բանկային երաշխիքի ներկայացումը Ա/ԱՇ/Ծ գնի գնումների բազային միավորի տասնապատիկը գերազանցելու դեպքում ոչ բարենպաստ, խտրական պայմաններ է ստեղծում փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող ընկերությունների համար: Բացի այդ, գնումների գործընթացում որակավորման և պայմանագրի ապահովմման համար միասին սահմանվում է 110% սահմանաչափը, որը պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմիանի լուծման դեպքում ֆինանսական մեծ հարված կհասցնի պայմանագրի մյուս կողմին և/կամ կողմերին:	
4	Թեև ՀՀ-ում վերջերս ներդրվել է որակի ապահովման ինստիտուտը՝ որպես ընկերությունների կողմից պարտավորությունները որակյալ իրականացնելու երաշխիք, սակայն գտնում ենք որ այդ մոտեցումը համապարփակ կերպով չի անդրադառնում խնդրին, քանի որ չի կիրառվում անհատական վարկանիշային մոտեցում: Նշենք, որ ՀՀ-ում գնումների ոլորտում վարկանիշային մոտեցում նախատեսված է միմիայն ճանապարհաշինարարական աշխատանքների գնումների դեպքում և իրականացվում է նախկինում կատարված աշխատանքների նկատմամբ պայմաններ սահմանելու միջոցով:	**Ներդնել մասնակիցների վարկանիշային համակարգ գնումների ոլորտում:** Վարկանիշային համակարգի հիմնական էությունը կայանում է նրանում, որ ընկերությունները կունենան վարկանիշներ, որոնք կարող են բարձանալ կամ նվազել ըստ օրենքով սահմանված գործոնների: Անհրաժեշտ է սահմանել, որ վարկանիշները հաշվի կառնվեն հայտերի գնահատման գործընթացում և որոշակի բարդության կամ կարևորության աշխատանքներ կարող են կատարվել և ծառայություններ՝մատուցվելմիայն որոշակի վարկանիշից բարձր վարկանիշ ունեցող ընկերությունների կողմից: Առաջարկվում է վարկանիշային համակարգը կազմելերկու խումբ գործոններից: Առաջին խումբ գործոնները կդիտարկվեն որպես էական գործոններ

		և ուղղակիորեն կհաշվարկվեն հայտերի գնահատման գործընթացում: Նման գործոնների շարքում կներառվեն նախկինում ստանձնած պարտավորությունները թերացումներով կատարելը (կհանգեցնի վարկանիշի նվազեցման) և պատշաճ կատարելը (կհանգեցնի վարկանիշի բարձրացման): Երկրորդ խումբ գործոնները կդիտարկվեն որպես ոչ էական գործոններ և այլ հավասար պայմաններում նախապատվություն կտրվի այն ընկերություններին, որոնց մոտ այդ գործոններն առկա են: Նման գործոնների շարքում առաջարկում ենք դասել կորպորատիվ կառավարման համակարգի առկայությունը, այդ թվում վերջինիս հետևյալ բաղադրիչները՝ կորպորատիվ կառավարման միջազգային ստանդարտներին համապատասխանող կանոնագրքի առկայությունը, կորպորատիվ կառավարման տարեկան զեկույցիհրապարակումը, հակակոռուպցիոն համապատասխանության ընթացակարգերիներդրումը, որը միջազգային պրակտիկայում ապացուցում է մասնագիտացված ընկերությունների կողմից հավաստագրման միջոցով, միջազգային ստանդարտներով աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ու հրապարակումը, ինչպես նաև կին ղեկավարների կողմից կառավարումը և/կամ կանանց և տղամարդկանց ընկերությունում հավասար աշխատավարձի տրամադրումը: Նման կարգավորումներ նախատեսված են մի շարք երկրներում, ինչպիսիք են Արգենտինան[1],Շվեյցարիան[2], Եգիպտոս և այլն:

[1] *«Բոլոր այն ընկերությունները, որոնք կնքում են պետական գնումների գործընթացի արդյունքում 100 միլիոն ԱՄՆ դոլլարը գերազանցող պայմանագրեր, պարտադիր պետք է ունենան բարեվարքության ծրագրեր»,* Արգենտինային N 27401 օրենք, 8-րդ հոդված,հասանելի է՝ https://www.boletinoficial.gob.ar/detalleAviso/primera/175501/20171201:

[2] *«Պետական գնումների մասին իրավական կարգավորումների համաձայն՝ պետական գնումներին կարող են մասնակցել միայն այն տնտեսվարողները, որոնք ապահովում են հավասար վարձատրություն համարժեք աշխատանքի համար»:* «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի և Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի իրականացման գնահատման զեկույց», ՄԱԶԾ, ՄԱԲՀ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Երևան, 2015թ., էջ 76, հասանելի է՝ https://www.un.am/up/library/Assessement_2011-2015_Gender%20Policy_arm.pdf:

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td>Նման մոտեցումը հնարավորություն կընձեռի ոչ միայն կատարելագործել գնումների ոլորտը, մասնավորապես՝ պարտավորությունների պատշաճ կատարումը, այլև կհետապնդի մի շարք այլ նպատակներ, այդ թվում՝ ֆինանսական շուկայի կատարելագործումը,աշխատավարձի գենդերային ճեղքվածքի հաղթահարումը, կանանց մասնակցության խթանումը, մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարը և այլն։

ՀՀ ԳՀ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխան գրությամբ նշվել էր, որ այս առաջարկի որոշակի բաղադրիչներ ընդունելի են, մասնավորապես նրանք, որոնք վերաբերվում են հավասար պայմանների առկայության պարագայում նախապատվության տրամադրմանը և հավելյալ քննարկման առարկա են։</td>
</tr>
<tr>
<td>5</td>
<td>«ՓՄՁպետականաջակցությանմասին» ՀՀՕրենքիհամաձայնՓՄՁսուբյեկտներըբաժանվումեն «գերփոքր», «փոքր» և «միջին» խմբերի՝համաձայն ստորև բերված աղյուսակի։
<table>
<tr><th>Դասակարգման չափորոշիչ</th><th>Աշխատողների թվաքանակ</th><th>Տարեկան շրջանառություն</th><th>Հաշվեկշիռ</th></tr>
<tr><td>Գերփոքր</td><td><10</td><td><=100մլն. դրամ</td><td><=100մլն. դրամ</td></tr>
<tr><td>Փոքր</td><td><50</td><td><=500մլն. դրամ</td><td><=500մլն. դրամ</td></tr>
<tr><td>Միջին</td><td><250</td><td><=1500մլն. դրամ</td><td><=1000մլն. դրամ</td></tr>
</table>
Գնումների գործընթացին հատկապես փոքր և գերփոքր ձեռնարկությունների մասնակցության հարցում դեռևս առկա են խնդիրներ, որոնք վերաբերում են հիմնականում գնումներին մասնակցելու ընթացակարգերի բարդությանը և խոշոր ընկերությունների հետ մրցակցության դժվարություններին։</td>
<td>Հանրային գնումների գործընթացին գերփոքր և փոքր ձեռնարկությունների ձեռնարկությունների մասնակցության խրախուսման նպատակով որոշակի պայմանների առկայության դեպքում սահմանել և կիրառել լրացուցիչ գործիք՝ քվոտավորման մեխանիզմ: Այդ պայմաններն են՝

հայտարարված պետական գնումներին մասնակցելու համար գերփոքր և փոքր ձեռնարկությունների կողմից ներկայացված հայտերի առկայություն, և
գերփոքր և փոքր ձեռնարկություններից ստացված հայտային էական պայմանների (օր. գին, որակ, մատակարարման ժամկետ և այլն) և այլ ձեռնարկություններից ստացված հայտերի նախընտրելի պայմանների հավասարություն:

Նման դեպքերում գերփոքր և փոքր ձեռնարկությունների համար սահմանել քվոտա (օրինակ՝ 10%) և անհրաժեշտ ապրանքների կամ ծառայությունների 10 տոկոսը գնել գերփոքր և փոքր ձեռնարկություններից: Օրինակ, եթե պետական որևէ կառույցի համար անհրաժեշտ են 10,000 աշխատանքային</td>
</tr>
</table>

		արտահագուստներ, գերփոքր և փոքր ձեռնարկությունների կողմից ներկայացվել են հայտեր, որոնց մի մասը էական պայմաններով չի զիջում այլ՝ խոշոր ընկերությունների նախընտրելի պայմաններին, ապա այդ արտահագուստների 10 տոկոսը գնել գերփոքր և փոքր ձեռնարկություններից: Քվոտավորման նման մեխանիզմի կիրառումը զգալիորեն կխրախուսի Հայաստանում ՓՄՁ ոլորտի, մասնավորապես՝ գերփոքր և փոքր ձեռնարկությունների աճին և զարգացմանը, նրանց արտադրանքի/ծառայությունների ծավալների և որակի մեծացմանը, ինչն իր հերթին կարող է էական ներդրում լինել ՀՀ կառավարության գերակա նպատակներից մեկի՝ ՓՄՁ ոլորտի շեշտակի զարգացման գործին: Մարզերում՝ նույն սկզբունքը կիրառել տեղական ՓՄՁ-ների մասնակցության դեպքում: *ՀՈԳ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխան գրությամբ նշվել էր, որ այս առաջարկի նախապես ներկայացված համառոտ տարբերակի վերաբերյալ անհրաժեշտ է ներկայացնել առավել մանրամասն կարգավորումներ, ինչն էլ ներկայացված է:*
6	Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ***բողոքարկման գործընթացիհիմնարար գործոնն է անկախությունը:***Մի շարք երկրներում ընդհանրապես բացակայում է հատուկ մարմին, և փոխարենը գործի քննությունն իրականացվում է դատարանների կողմից, օրինակ՝ Բուլղարիա, Ավստրիա, Միացյալ Թագավորություն (Գերագույն դատարան):	**Բողոքարկումն իրականացնել միայն դատարանի միջոցով**՝ նման դեպքերի համար սահմանելով հատուկ վարույթով որոշումների կայացման արագացված ընթացակարգ: *ՀՈԳ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխան գրությամբ նշվել է, որ այս առաջարկը գտնվում է քննարկման փուլում, սակայն օրենսդրական փոփոխություններում վերջինս արտացոլված չէր:*

7	http://gnumner.am/-ի տեղեկագրի որոնման համակարգն ունի կատարելագործման կարիք, որը պայմանավորված է ֆիլտրման խիստ սահմանափակ հնարավորություններով: Արդյունքում, բարդություններ են առաջանում հետաքննող լրագրողների և գնումների մշտադիտարկմամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների համար՝ վերհանել մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացված խախտումներ, օրինակ՝ գնման առարկայի արհեստականորեն բաժանումը չափաբաժինների՝ ըստ գնումների միասնական անվանացանկի ծածկագրերի տարբեր խմբերի՝ կիրառելով մեկ անձից գնման ընթացակարգը մրցակցային ընթացակարգերի փոխարեն, ինչը բերում է կոռուպցիոն ռիսկերի և այլն:	**Կատարելագործել http://gnumner.am/-ի տեղեկագրի որոնման համակարգը՝ նախատեսելով ֆիլտրման լայն հնարավորություններ,** մասնավորապես՝ միաժամանակյա ֆիլտրում ըստ կոնկրետ պատվիրատուի և կոնկրետ փաստաթղթի տեսակի, օրինակ X պատվիրատուի միայն մեկ անձից գնման ընթացակարգով կատարված գնումները: *ՀՀ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխան գրությամբ նշվել էր, որ այս առաջարկի վերաբերյալ պայմանավորվածություն էձերք բերվել քննարկել տեղեկագրում ֆիլտրման հնարավորությունները մեծացնելու հարցը, ինչն էլ առավել կոնկրետացված ներկայացված է:*
8	Գործնականում հաճախակի բնույթ են կրում այնպիսի իրավիճակներ, երբ գնումների համակարգողը կատարում է նաև պատասխանատու ստորաբաժանման և գնահատող հանձնաժողովի գործառույթները, իսկ վերջիններս՝ միայն ստորագրում են նշյալ փաստաթղթերը՝ ընդհանրապես պատկերացում չունենալով գնման գործընթացներից:	Պարբերաբար **վերապատրաստել** ոչ միայն գնումների համակարգողներին, այլ՝ **պատասխանատու ստորաբաժանումների և գնահատող հանձնաժողովների անդամներին** ևս: Սույն առաջարկի անհնարինության դեպքում միայն առաջարկվում է ներդնել գնումների համակարգողների վերապատրաստման նոր մոդուլ՝ վերապատրաստողների վերապատրաստում (ToT), երբ գնումների համակարգողը պարտականություն կունենա վերապատրաստվելուց հետո վերապատրաստել պատասխանատու ստորաբաժանման և գնահատող հանձնաժողովի անդամներին *ՀՀ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխան գրությամբ նշվել է, որ այս առաջարկն ընդունելի է, սակայն այդ ուղղությամբ չեն իրականացվել որևէ քայլեր, ներառյալ՝ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններ:*
9	Առկա չէվիճակագրություն հանրային գնումների մրցույթներին մասնակցած և հաղթած ՓՄՁ-ների, հատկապես՝ գերփոքր և փոքր ձեռնարկությունների չափաբաժնի վերաբերյալ: Էլեկտրոնային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների մասով armeps.am/ppcm հղումով համացանցում գործող գնումների հաշվետվողականության ծրագիրը ևս հնարավորություն չի	Իրավասու մարմնի կողմից կազմակերպել և իրականացնել համապատասխան **վիճակագրության վարում, որը կարտացոլի ամբողջական և համապարփակ տվյալներ հանրային գնումների մրցույթներին մասնակցած և հաղթած ՓՄՁ-ների վերաբերյալ**: Այդ նպատակով անհրաժեշտ է պահանջել, որպեսզի ընկերությունների

	տալիսվերհանել նշված վիճակագրությունը:	կողմից ներկայացվող հայտերը նշում պարունակեն ընկերության կողմից գերփոքր, փոքր կամ միջին ձեռնարկություն լինելու վերաբերյալ՝ ըստ 6-րդ կետում արդեն իսկ նշված ՓՄՁ դասակարգման չափորոշիչների, այնուհետև կատարելագործել armeps.am/ppcm հղումով համացանցում գործող գնումների հաշվետվողականության ծրագրի ֆիլտրները, որպեսզի վերջինս արտացոլի նշված վիճակագրությունը:
10	Գնումների ոլորտում հաճախակի տեղիունեցող օրենսդրական փոփոխությունները, գնման գործընթացների անցումը էլեկտրոնային եղանակների և այդ նպատակներով տարաբնույթ հարթակների օգտագործումը և այլ գործոններ նպաստում ենթե տնտեսվարող սուբյեկտների, թե մշտադիտարկմամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին լրագրողական համայնքների իրազեկման ցածր մակարդակին և կարողությունների պակասին: Այս կապացությամբ հարկ է նշել, որ գնումների համակարգի նկատմամբ իրազեկվածության բարձրացումը և վերահսկողությունը նախատեսված են մի շարք փաստաթղթերով, այդ թվում՝ ՀՀ – ԵՄհամապարփակ և ընդլայնված գործընկերությանհամաձայնագրով, ԵՄ և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններով, ինչպես նաև՝ «Հայաստանի հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ֆինանսական համաձայնագրով:	**2021 թվականի պետական բյուջեում սահմանելֆինանսական միջոցներ մրցութային հիմունքներով դրամաշնորհային ծրագիր իրականացնելու համար, որով կպատվիրակվեն ծառայություններմասնագիտացված քաղաքացիական հասարակության կառույցներին իրազեկման արշավներ իրականացնելու ուղղությամբ:** Վերջինս կարող է ներառել գնումների ոլորտում կատարվող բոլոր մրցույթների, օրենսդրական փոփոխությունների և օրենսդրության կիրարկման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտներին պարզաբանումներ ներկայացնելու նպատակով պարբերաբար սեմինարների, կլոր սեղանների և խորհրդատվությունների կազմակերպում և անցկացում, իրականացվող ծառայությունների թափանցիկության բարձրացում՝ բուկլետների, թռուցիկների հրապարակում, քաղաքացիական հասարակության և լրագրողական համայնքների ներկայացուցիչների վերապատրաստումների իրականացում: